# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, Հեռ. (094) 519030
, hatsavan.kotayk@mta.gov.am

N 203
*15 դեկտեմբեր 2017թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2017թվականի դեկտեմբերի 08-ի N 39-Ա և դեկտեմբերի 13-ի N 40-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ./093-212366/*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 39-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով

*որոշում եմ*

1. 2017թվականի դեկտեմբերի 11-ին ժամը $11^{00}$-ին հրավիրել ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1) Հացավանի համայնքապետարանի աշխատակազմի 2018թվականի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

2) Հացավան համայքնի ղեկավարի 2018թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:

3) Հացավան համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 15-ի N 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

4) Հացավան համայնքի 2018թվականի ավագանու նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

5) Հացավան համայնքի վարչական տարածքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

6) Հացավան համայնքի վարչական տարածքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2018թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 08
գ.Հացավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 40-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով,հաշվի առնելով սոցիալական վիճակից,ելնելով ֆինանսական օգնություն ստանալու մասին համայնքի բնակիչներ Սահականուշ Սահակի Ղարիբյանի,Հայկանդուխտ Գարեգինի Թոմասյանի դիմումները՝հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանները ուսումնացիրող հանձնաժողովի եզրակացությունը՝

*որոշում եմ*

1.Հացավան համայնքի բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝
  1) Սահականուշ Սահակի Ղարիբյան 70000 /յոթանասուն հազար դրամ/
  2) Հայկանդուխտ Գարեգինի Թոմասյան 70000 /յոթանասուն հազար դրամ/
2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետին վճարումն իրականացնել համայնքի բյուջեի համապատասխան հոդվածից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2017 թդեկտեմբերի 13
գ.Հացավան